« 14 » մարտ 2025թ. No 1540 - Ա

# «ՈՒՐՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՄԱՍ 1-2)» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

## 2025թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Իզմիրլյան» ԲԿ)

## ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

- Գրություն՝ 17.03-11.04.
- Թիրախային լսարան՝ ուրոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-10 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՁ 30 տեսական և 45 գործնական կրեդիտ.
  մաս 1-ի մասնակիցներին՝ ՇՄՁ 10 տեսական և 15 գործնական կրեդիտ,
  մաս 2-ի մասնակիցներին՝ ՇՄՁ 20 տեսական և 30 գործնական կրեդիտ,
  դասավանդող Արթուր Գրաբսկիին՝ ՇՄՁ 30 տեսական և 45 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010235310

| | |
|---|---|
| **Մաս 1՝ Միզաքարային հիվանդություն**<br>**Շաբաթ 1**<br>**Օր 1** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Միզաքարային հիվանդություն: Էթիոլոգիա, պաթոգենեզ, սիմպտոմատիկա |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Պացիենտների հետ աշխատանք՝ ղեկավար դասախոսի ներկայությամբ:<br>ՄՔՀ կլինիկական դրսևորումների, գանգատների, անամնեզի հիման վրա նախնական ախտորոշման կայացում |
| **Օր 2** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Միզաքարային հիվանդության ախտորոշում: Հետազոտման ճիշտ ալգորիթմը:<br>ՄՍԿՏ-ի դերը ՄՔՀ ախտորոշման և բուժման տակտիկայի ընտրության ժամանակ |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք ուրոլոգիական և ախտորոշիչ բաժանմունքներում՝ համատեղ համայց, բաժանմունքում առկա պացիենտների ներկայացում, քննարկում:<br>Ախտորոշիչ ժամանակակից մեթոդների քննարկում |
| **Օր 3** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>ՄՔՀ բուժման ժամանակակից մեթոդները:<br>Հեռահար-հարվածաալիքային քարափշրում, էնդոսկոպիկ մեթոդներ՝ ՈՒՌՍ և ՊՆԼՏ, կոնտակտային քարափշրում: Բուժման օպտիմալ մեթոդի ընտրությունը |

| | |
|---|---|
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ ՀՀԱՔ-ի, էնդոսկոպիկ վիրահատությունների մասնակցություն՝ որպես ասիստենտ |
| **Օր 4** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>ՄՔՀ բուժման ժամանակակից մեթոդները:<br>Միանվագ օգտագործման էնդոսկոպիկ սարքավորումների դերն ու առավելությունները բուժման գործընթացում:<br>Ռետրոգրադ ներերիկամային վիրահատություն (RIRS) ճկուն էնդոսկոպերի և լազերի օգտագործմամբ |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում: Ճկուն և ռիգիդ ուրետերոռենոսկոպերի միջոցով կատարվող վիրահատությունների ծանոթացում, մասնակցություն |
| **Օր 5** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Միզաքարային հիվանդության պրոֆիլակտիկա և մետաֆիլակտիկա:<br>Միզային քարերի բաղադրության, տեսակի որոշման դերն այդ գործընթացում |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Համայց բաժանմունքի վարիչի գլխավորությամբ, պացիենտների հետվիրահատական վիճակի գնահատում: Աշխատանք վիրահատարանում, լազերային քարափշրման մեթոդների ծանոթացում |
| **Մաս 2՝ Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիա**<br>**Շաբաթ 2**<br>**Օր 1** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Ստորին միզուղիների սիմպտոմներ: Էթիոլոգիա, պաթոգենեզ:<br>ՍՄՍ առաջացնող հիվանդությունների տարբերակիչ ախտորոշում |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Պացիենտների հետ աշխատանք՝ ղեկավար դասախոսի ներկայությամբ:<br>Ստորին միզուղիների սիմպտոմների հիման վրա նախնական ախտորոշման կայացում, հետազոտման պլանի կազմում |
| **Օր 2** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիա: Ռիսկի գործոններ:<br>Հետազոտման ճիշտ ալգորիթմը. ՈՒՁՀ, ուրոֆլոումետրիա, ՊՍԱ, ՄՌՔ, IPSS |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>IPSS-ի ճիշտ լրացում, ծանոթություն ուրոֆլոումետրիայի սկզբունքներին ու աշխատանքին, մնացորդային մեզի որոշում, ՄՌՔ-ի կատարում՝ ղեկավար դասախոսի հսկողությամբ |
| **Օր 3** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիա և շագանակագեղձի քաղցկեղ:<br>Տարբերակիչ ախտորոշման առանձնահատկությունները: ՊՍԱ-ի դերը |

| | |
|---|---|
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի մոնոպոլյար ՏՈՒՌ-ի մասնակցություն, որպես ասիստենտ |
| **Օր 4** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի ՄՌՏ քննություն: Շագանակագեղձի բիոպսիա |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի բիոպսիայի ծանոթացում և մասնակցություն, որպես ասիստենտ |
| **Օր 5** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի կոնսերվատիվ բուժման ժամանակակից մոտեցումները: Դեղորայքային մոնո- և կոմբինացված թերապիա |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի բիպոլյար ՏՈՒՌ-ի մասնակցություն, որպես ասիստենտ |
| **Շաբաթ 3**<br>**Օր 1** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի վիրահատական բուժման տարբերակները: Շագանակագեղձի տրանսուրետրալ ռեզեկցիա (մոնոպոլյար, բիպոլյար և լազերային), շագանակագեղձի տրանսուրետրալ ինցիզիա |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի մոնոպոլյար և բիպոլյար ՏՈՒՌ-ի մասնակցություն, որպես ասիստենտ |
| **Օր 2** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի վիրահատական բուժման տարբերակները: Լազերային վապորիզացիա, լազերային և բիպոլյար էնուկլեացիա |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի լազերային ՏՈՒՌ-ի մասնակցություն, որպես ասիստենտ |
| **Օր 3** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի բուժման նորագույն մեթոդները: Ջրային աբլյացիա, շագանակագեղձի զարկերակների էմբոլիզացիա |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի մոնոպոլյար, բիպոլյար կամ լազերային ՏՈՒՌ-ի մասնակցություն |
| **Օր 4** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի բուժման քիչ ինվազիվ մեթոդները: Պրոստատիկ ուրետրալ լիֆտ, ինտրապրոստատիկ ներարկումներ, պրոստատիկ ստենտ |

| | |
|---|---|
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ շագանակագեղձի մոնոպոլյար, բիպոլյար կամ լազերային ՏՈՒՌ-ի մասնակցություն: Վիրահատության որոշ փուլերի ինքնուրույն կատարում՝ ղեկավարի հսկողությամբ |
| **Օր 5** | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի վիրահատական բուժում: Բաց ադենոմէկտոմիայի ցուցումները արդի ժամանակներում |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Աշխատանք վիրահատարանում՝ բաց ադենոմէկտոմիայի մասնակցություն, որպես ասիստենտ |

Դասավանդող՝ բ.գ.թ.Արթուր Գրաբսկի: